



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԵՐ. ՅՈՎԱՏԵՓ ՄԱԹՈՍԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Չորեքշաբթի, 1 Հոկտեմբերի յետմիջօրեին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգ. Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան Հովիւ Վեր. Յովսէփ Մաթոսեանի: Ծանօթ է որ հիւր հոգեւորականը վերջերս վերընտրուած էր իր պաշտօնին:

Առաջնորդ Սրբազանը շնորհաւորեց Վեր. Յ. Մաթոսեանը: Խորհրդակցութիւնները ընդգրկեցին շրջանիս հայութիւնը յուզող հարցեր: Վեր. Յ. Մաթոսեան, իր կարգին, շնորհաւորեց Առաջնորդ Սրբազանը՝ իր վերընտրութեան առիթով, ապա նաեւ խնդակցութիւն արտայայտեց, նկատի ունենալով, որ այս տարի կը տօնենք Հիւսիսային Ամերիկայի մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ծառայական կեանքի 50րդ տարեդարձը:

PRELATE MEETS WITH REV. JOE MATOSSIAN

On the afternoon of Wednesday, October 1st, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Minister to the Armenian Evangelical Union of North America Rev. Joe Matossian to the Prelacy.

The Prelate congratulated Rev. Matossian on his recent re-election as Minister to the Union, and Rev. Matossian in turn congratulated the Prelate on his re-election. During their meeting, the Prelate and Rev. Matossian discussed a wide range of issues regarding the community including the upcoming 50th anniversary celebration of the establishment of a Catholicosate of Cilicia Prelacy in North America.